ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
22.07.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
1.2 ՀՎՀՀ-ն		00006023
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Պարոնյան 21/1
1.4 Պետական գրանցման համարը		211.171.01928
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1993-10-26
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99521412
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.redcross.am
1.8 Էլեկտրոնային փոստը		accounting@redcross.am
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԱՐԹՈՒՐ	ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ	Գլխավոր քարտուղար
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Առարկան՝ Նվազեցնել ազգաբնակչության խոցելիությունը մարդասիրության ուժի մոբիլիզացմամբ:Նախապատրաստվել դիմակայելու այն իրավիճակներին, որոնք կարող են ազգաբնակչության խոցելիության պատճառ դառնալ:Ցուցաբերել անհրաժեշտ օգնություն ստարելով սոցիալ-տնտեսական շանր պայմաններում գտնվող մարդկանց:		
Նպատակը՝ Կազմակերպության գործունեությունը նպատակամղված է ՀՀ օրենսդրության և միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար դրույթների հիման վրա, օժանդակել հասարակության սոցիալական անապահով խավերին, օգնել աղետներից, պատերազմներից տուժածներին,տարածել մարդասիրական գաղափարները հասարակության մեջ, ինչպես նաև իրականացնել օրենքով նախատեսված հանրօգուտ այլ գործունեություն:		
Կազմակերպությունը պետական իշխանություններին օժանդակող կազմակերպություն՝, գործում է օրինականության, հրապարակայնության, անդամության, կամավորության,ինքնակառավարման,ղեկավարման կոլեգիալության սկզբունքների հիման վրա:		
Կազմակերպության հիմնական նպատակն է կանխարգելել և թեթևացնել մարդկային տառապանքները՝ անկախ ազգությունից, ռասայական, սեռային, հոգևոր դասակարգային պատկանելությունից և քաղաքական հայացքներից: Իր նպատակի իրականացման համար Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը օրենքով սահմանված կարգով մշակում և իրագործում է ծրագրեր՝ ուղղված իր խնդիրների լուծմանը, մասնավորապես		
ա/գործում է զինված ընդհարումների ժամանակ, իսկ խաղաղ պայմաններում նախապատրաստվում գործելու Ժնևի համաձայնագրերով նախատեսված բոլոր ոլորտներում և ի պաշտպանություն պատերազմի ռազմական, ինչպես նաև քաղաքացիական զոհերի և տուժածների,		
բ/ստեղծում է համապատասխան ծառայություններ, որոնք կկարողանան անհրաժեշտ օգնություն ցուցաբերել տարերային աղեներից, վթարներից և այլ արտակարգ իրավիճակներից տուժածներին, խիստ կարիքավորներին,		
գ/մշակում և իրագործում է երկարաժամկետ ծրագրեր՝ ուղղված ազգաբնակչության խոցելիության նվազմանը, բժշկական , սոցիալական և այլ խնդիրների լուծմանը, ինչպես նաև յայնորեն մասնակցում պետական սոցիալտնտեսական զարգացման ծրագրերին,		
դ/իրականացնում է մանուկների, պատանիների և երիտասարդների բարոյաֆիզիկական դաստիարակման հետ կապված ծրագրեր և խթանում նրանց մասնակցությունը Կարմիր Խաչի աշխատանքներին,		
ե/հավաքագրում և պատրաստում է բարձրորակ անձնակազմ՝ ՀԿԽԸ-ի խնդիրներն իրականացնելու համար,		
զ/տարածում է Շարժման հիմնարար սկզբունքները ազգաբնակչության, մասնավորապես, մանուկների և երիտասարդների մեջ՝ աշխարհի բոլոր մարդկանց և ժողովուրդների նկատմամբ խաղաղության , հարգանքի և փոխըմբռնմանգաղափարները զարգացնելու համար,		
է/տարածում և խթանում է կամավորական շարժման գաղափարը ազգաբնակչության՝ հատկապես երիտասարդության մեջ		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		365
4.2 Կամավորների թիվը		2218
4.3 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		4
5 Իրականացված ծրագրեր՝		

5.1	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը

Digitally signed by KHACHATRYAN ARMINE 69127501 09
Date: 2025.08.01 16:42:30 AMT

1	«Կրթության հասանելիության ապահովում ՀՀ սահմանամերձ համայնքների աշակերտների և ղարաբաղյան հակամարտության հետևանքով տեղահանված երեխաների համար»	ՀՀ, Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի, Կոտայքի, Արմավիրի մարզեր և Երևան	Ոչ ֆորմալ կրթության (դասապատրաստում, սիրողական խմբակներ, երեխաների կայունացմանն ուղղված թեմատիկ դասընթացներ) իրականացում հիմնված Ժպիտների ակումբներում«Խարանի և խտրականության նվազեցում և սոցիալ-հոգեբանական աջակցություն ՏԲ հիվանդներին:	Ընթացքի մեջ
2	«Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին-Ժպիտների ակումբ»	ՀՀ, Կոտայքի մարզ և Երևան	Աջակցություն երեխաների կրթական մակարդակի բարձրացմանը իրականացնելով մշակութային, մարզական և ինտելեկտուալ միջոցառումներ հանրակացարանաբնակ երեխաների համար:	Ընթացքի մեջ
3	«Ապահով, ներառական և դիմակայուն կրթություն Հայաստանում»	Երևան	Կրթական շարժման հայեցակարգի իրականացում Հայաստանում (M4E) -ի հետ համատեղ իրականացվող համապարփակ և համակարգված կրթական ծրագրի հետագա մշակման, հաստատման և իրականացման համար սահմանված ռազմավարական և օպերատիվ ուղղություններով:	Ընթացքի մեջ
4	«Փախստականների պաշտպանություն և ինտեգրում	ՀՀ	Ընդունելության պայմանների բարելավում, կենսապահովման մակարդակի բարձրացում, քաղաքացիական կողմնորոշման և մշակութային սեսիաների անցկացում, հաց լեզվի դասեր, համայնքային զարգացման ծրագրեր,փախստական երեխաների պաշտպանության դեպքերի վարում, ԷԴ-ից տեղահանված անձանց պաշտպանության մոնիթորինգի իրականացում:	Ավարտված
5	«Դիմակայունություն Քովիդ-19-ին Հայաստանում և Վրաստանում, և արձագանք, լեռնային Ղարաբաղի հակամարտությանը»	ՀՀ	Սննդային ապրանքների և հիգիենիկ պարագաների բաշխում,խմբային հոգեբանական միջոցառումներ, բնակվարձերի փոխհատուցում, կարիերայի զարգացման և ֆինանսական գրագիտության դասընթացներ:	Ավարտված
6	«Մարդասիրական աջակցություն Ջերմուկ քաղաքի բնակչությանը»	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ Ազատ	Սեպտեմբերի 13-14 Ռազմական գործողությունների հետևանքով տուժած Ջերմուկ քաղաքի ազգաբնակչությանը հումանիտար աջակցության տրամադրում	Ավարտված
7	«Հումանիտար աջակցություն Արձագանք Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության կարիքներին»	ՀՀ	Հումանիտար աջակցություն Արձագանք Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության կարիքներին	Ընթացքի մեջ
8	«Հակամարտության հետևանքով տուժած անձանց հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցություն»	ՀՀ Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Գեղարքունիքի մարզեր	Հակամարտության հետևանքով տուժած անձանց հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցություն	Ավարտված
9	«Կանխիկ դրամական աջակցություն ՀՀ տարածքում գտնվող Արցախից տեղահանվածներին»	ՀՀ	Ձմեռնամուտի աջակցության համար միանվագ դրամական օգնություն Արցախից տեղահանված անձանց:	Ընթացքի մեջ
10	«Համայնքային Ինտեգրացված Տնային Խնամք և Ակտիվ Ծերացում»	ՀՀ, Շիրակի, Լոռու, Վայոց Ձորի մարզեր	Բարելավել տարեցների, քրոնիկ հիվանդություն ունեցող անձանց և հաշմանդամների կյանքի որակը՝ ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավման միջոցով:	Ընթացքի մեջ
11	«Աշխատելով միասին հանուն որակյալ խնամքի, բարեկեցության և արժանապատիվ կյանքի»	ՀՀ, Շիրակի մարզ, ք Գյումրի	Բարելավել ՀԿԽԸ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի ծառայությունների որակը նվազագույն չափորոշիչների բարելավվման և անձնակազմի վերապատրաստման միջոցով:	Ընթացքի մեջ
12	«Ամբուլատոր բուժման մեջ գտնվող տուբերկուլոզով հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրում և ՏԲ վերաբերյալ իրազեկվածության բարձրացում»	ՀՀ	ՏԲ հիվանդներին տրամադրել սոցիալ-հոգեբանական աջակցություն և կազմակերպել իրազեկման քննարկումներ ՏԲ հիվանդների և նրան ընտանիքի անդամների շրջանում:	Ավարտված

13	«Հայաստանի Հանրապետությունում առաջին արձագանքման կամավորական ծառայության ինստիտուցիոնալիզացում»	ՀՀ	Ծրագիրը միտված է համայնքներում կամավոր հրշեջ-փրկարարական խմբերի ստեղծմանը և կարողությունների զարգացմանը՝ տեղական արձագանքման կարողությունները բարելավելու նպատակով:	Ընթացքի մեջ
14	«Առաջին օգնության և աղետներին արձագանքման ՀԿԽԸ կարողությունների զարգացում»	ՀՀ	Ուժեղացնել ՀԿԽԸ կարողությունները արդյունավետ և անվտանգ կերպով մարդասիրական աջակցություն ցուցաբերելու մեջ	Ընթացքի մեջ
15	«Կլիմայական վտանգների նկատմամբ վաղ ազդարարման և վաղ գործողության բազմաբևեռ ընդլայնում»	ՀՀ, Արմավիրի մարզ	Կլիմայական վտանգների հանդեպ վաղ նախազգուշացման և արձագանքման մեխանիզմների հզորացում	Ընթացքի մեջ
16	«Սոցիալական Պաշտպանություն, ներառում և հզորացում»	ՀՀ Արարատի, Կոտայքի, Արմավիրի, Սյունիքի մարզեր	Հումանիտար աջակցություն Արձագանք Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչությանը	Ավարտված
17	«Հայկական կարմիր խաչի ինստիտուցիոնալ պատրաստվածության զարգացում»	ՀՀ	ՀԿԽԸ ինստիտուցիոնալ պատրաստվածության հզորացում խոցելի և ճգնաժամից տուժած մարդկանց մարդասիրական ծառայություններ և արդյունավետ արձագանք տրամադրելու նպատակով	Ընթացքի մեջ
18	«Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքում ջրհեղեղից տուժած բնակչության կարիքներին արագ արձագանքում»	ՀՀ, Լոռու մարզ	ԼՂ տեղահանված և Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքում ջրհեղեղից տուժած բնակչության կարիքներին արագ արձագանքում	Ավարտված
19	«Համավարակի և հակամարտության ընթացքում աջակիցների հոգեկան առողջության և սոցիալ-հոգեբանական աջակցության վերաբերյալ գիտելիքի և գործընկերության ընդլայնում»	ՀՀ	Ծրագրի նպատակն է հիմնել ապացուցողական և արդյունավետ հոգեբանական աջակցություն առաջնագծի մասնագետների համար հումանիտար ճգնաժամերի ժամանակ՝ խթանելով հետազոտությունները, վերապատրաստումները և գիտելիքի փոխանակումը, ինչպես նաև զարգացնելով կայուն համագործակցային ցանցեր գիտության և գործնական աշխատանքի միջև	Ավարտված
20	«Բնակչության տեղաշարժ»	ՀՀ, Արմավիրի և Արարատի մարզեր, Երևան	Բավարարել Հայաստանում նոր ժամանած 2,000 անձանց հիմնական կարիքները ապահովելով համակարգված առողջապահական ծառայություններ, միգրացիոն աջակցություն և հստակ հաղորդակցում՝ իրենց իրավունքների և հասանելի աջակցության վերաբերյալ Արմավիրի և Արարատի մարզեր, Երևան	Ավարտված
21	«Լոռու մարզում տեղի ունեցած ջրհեղեղի հետևանքներին արձագանքում»	ՀՀ, Լոռու մարզ	Լոռու Մարզի Ալավերդի խոշորացված համայնքում ջրհեղեղից տուժած բնակչության կարիքներին արագ արձագանքում	Ավարտված
22	«Զմեռային աջակցություն և ՀԿԽԸ ՄՄ կարողությունների զարգացում»	ՀՀ, Կոտայքի, Արմավիրի, Գեղարքունիքի, Տավուշի մարզեր	Միայնակ տարեցների և ՀՈՒԱ-ների բարեկեցության բարելավում ՀԿԽԸ մարզային մասնաճյուղերի կարողությունների զարգացման միջոցով	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ»	ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի	Ընթացքի մեջ	Շուրջօրյա խնամքի ծառայությունների տրամադրում տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց:	Բարելավված կյանքի որակ
2	«Տնային խնամքի ծառայություններ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց»	ՀՀ, Շիրակի մարզ	Ավարտված	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:	Բարելավված կյանքի որակ տնային ծառայությունների հասանելիության միջոցով

3	«Տնային խնամքի ծառայություններ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց»	ՀՀ, Վայոց ձորի մարզ	Ավարտված	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:
4	«Տնային խնամքի ծառայություններ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց»	ՀՀ, Լոռու մարզ	Ավարտված	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:
5	«Տնային խնամքի ծառայություններ տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց»	ՀՀ, Կոտայքի մարզ	Ավարտված	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:	Բարելավել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակը սոցիալառողջապահական տնային խնամքի ծառայությունների միջոցով:

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	4,458,716,924
8.2 Գույքը	229,752,814
Ընդամենը	4,688,469,738

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	277,605,300	ՀՀ աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն
2	3,605,620	ՀՀ աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն
3	4,210,856	ՀՀ աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն
4	4,038,000	ՀՀ աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն
5	7,563,198	ՀՀ աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն
6	1,500,000	Իջևանի քաղաքապետարան
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	298,522,974	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	4,787,695,510
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1	Փրկարարական գույք և այլ հիմնական միջոցներ	47,786,274
Ընդամենը		4,835,481,784

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	298,522,974
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		298,522,974

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	Առաջին օգնության դասընթացներ	5,061,950	Դասընթացավարների աշխատավարձ, դասընթացների համար անհրաժեշտ բժշկական և գրենական պիտույքների ձեռքբերում
2	Տնային խնամքի ծառայություններ	7,118,653	Տնային խնամողների աշխատավարձ, խնամքի պարագաների ձեռքբերում
3	Առաջին օգնության արկղիկների վաճառք	531,667	Առաջին օգնության արկղիկ պատրաստելու համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում
Ընդամենը		12,712,270	

Նշումներ

-

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____11_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին հաշվետվություն և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիր

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպություն
Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական
աջակցության գումարների օգտագործման մասին հաշվետվություն
«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիր
2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն 3

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն 6

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությանը կից ծանոթագրություններ ..... .10

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպության խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «Կազմակերպություն») կողմից իրականացված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Կազմակերպության միջև 2024թ. ապրիլի 10-ին կնքված N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-3 պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող «Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվության աուդիտը, ինչպես նաև այդ հաշվետվությանը կից պարզաբանող ծանոթագրությունները:

Մեր կարծիքով, կից Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը և ներկայացված ծանոթագրությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ծրագրի դրամական միջոցների մնացորդը՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների մուտքերն ու դրամական միջոցների վճարումները՝ համաձայն Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի պահանջների:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «*Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*» բաժնում: Մենք անկախ ենք Վայքի համայնքապետարանից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «*Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի*» (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

A Member of Crowe Global | A global network of independent accounting firms
Քրոու Գլոբալի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ

Crowe

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությանը կից թիվ 2 ծանոթագրությանը, որտեղ նկարագրվում է հաշվապահական հաշվառման հիմունքը: Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել է 2024թ. ապրիլի 10-ին կնքված N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-3 դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Ուստի այս Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը չի կարող օգտագործվել մեկ այլ նպատակով: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվության համար

Ղեկավարությանը պատասխանատու է Ծրագրի ֆինանսական հաշվետվության պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ թիվ 2 ծանոթագրությունում նկարագրված հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն: Պատասխանատվության շրջանակները ներառում են նաև ղեկավարության որոշումը տվյալ պայմաններում Ծրագրի ֆինանսական հաշվետվության պատրաստման համար հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի կիրառելի լինելու, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդահության կամ սխալի պատճառով էական խեղաթյուրումներից զերծ Ծրագրի ֆինանսական հաշվետվության պատրաստումն ապահովելու համար:
Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Աուդիտորի պատասխանատվությունը Ծրագրի ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ է էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվության հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով Ծրագրի ֆինանսական հաշվետվությունում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը

Crowe

կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման աընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյեք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք Ծրագրի ֆինանսական հաշվետվության ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև Ծրագրի ֆինանսական հաշվետվության հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

5 մայիսի, 2025թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի պատասխանատու

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար					հազար դրամ
Ծախսային հոդվածներ Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը		Ծածկագիրը	Հաստատված	Ճշտված	Տարեսկզբից աճողական
Տնտեսագիտական դասակարգման սինթեկտիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը		Նախահաշվի գումարը	Նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը
1	2	3	4	5	6
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**x**	**286,276.4**	**286,276.4**	**275,766.3**
Փոփոխուն ծախսեր			**70,272.0**	**70,272.0**	**63,731.6**
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		**426700**	**70,272.0**	**70,272.0**	**63,731.6**
	Հանրային սննդի նյութեր	426720	70,272.0	70,272.0	63,731.6
Ներքին գործուղումներ		**422100**	**-**	**-**	**-**
	Ներքին գործուղումների տրանսպորտային ծախսեր (աշխատողների ուղեվարձ)	422130			
Հաստատուն ծախս			**216,004.4**	**216,004.4**	**212,034.7**
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		**4111000**	**158,807.0**	**158,807.0**	**158,601.4**
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411110	158,807.0	158,807.0	156,274.6
	Ժամանակավոր աշխատողներին վճարվող աշխատավարձ	411120	-	-	-
	Դատարանի որոշումների հիման վրա վճարվող աշխատավարձ	411130	-	-	-
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ		**4112000**	**-**	**-**	**-**
	Պարգևատրումներ	411210	-	-	-
	Դրամական խրախուսումներ	411220	-	-	-
Էներգետիկ ծառայություններ		**421200**	**24,900.0**	**24,900.0**	**22,346.0**
	Էներգետիկ ծառայություններ	421210	14,500.0	14,500.0	11,946.0
	Ջեռուցման ծառայություններ	421220	10,400.0	10,400.0	10,400.0
Կոմունալ ծառայություններ		**421300**	**3,160.0**	**3,160.0**	**2,987.7**
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310	2,800.0	2,800.0	2,627.7

Սույն հաշվետվությունը պետք է ընթերցվի այս հաշվետվության բաղկացուցիչ մաս կազմող 11-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն (շարունակություն)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար — **հազար դրամ**

Ծախսային հոդվածներ Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը		Ծածկագիրը	Հաստատված	Ճշտված	Տարեսկզբից աճողական
Տնտեսագիտական դասակարգման սինթեկտիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը		Նախահաշվի գումարը	Նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը
	Այլ կոմունալ ծառայություններ	421390	360.0	360.0	360.0
Կապի ծառայություններ		**421400**	**180.0**	**180.0**	**174.9**
	Կապի աբոնենտային ծառայություններ	421410	172.8	172.8	167.7
	Տեղական խոսակցությունների վճար		-	-	-
	Միջքաղաքային խոսակցության գումար		7.2	7.2	7.2
	Ինտերնետային կապ		-	-	-
	Փոստային և սուրհանդակային վճարներ	421420	-	-	-
Ապահովագրական ծախսեր		**421500**	**120.0**	**120.0**	**117.0**
	Գույքի ապահովագրություն	421510	120.0	120.0	117.0
Գույքի և սարքավորումների վարձակալություն		**421600**	**-**	**-**	**-**
	Գույքի վարձակալություն	421610	-	-	-
	Սարքավորումների վարձակալություն	421620	-	-	-
Ներքին գործուղումներ		**422100**	**420.0**	**420.0**	**315.0**
	Ներքին գործուղումների օրապահիկ	422110	420.0	420.0	315.0
	Ներքին գործուղումների գծով հյուրանոցային ծախսեր	422120	-	-	-
	Ներքին գործուղ. կրանսպ. ծախսեր (օդանավ, ավտոբուս, գնացք և այլն)	422130	-	-	-
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		**423900**	-	-	-
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910	-	-	-

Սույն հաշվետվությունը պետք է ընթերցվի այս հաշվետվության բաղկացուցիչ մաս կազմող 11-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն(շարունակություն)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար					հազար դրամ
Ծախսային հոդվածներ Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը		Ծածկագիրը	Հաստատված	Ճշտված	Տարեսկզբից աճողական
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը		Նախահաշվի գումարը	Նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը
Մասնագիտական ծառայություններ		**424100**	**4,800.0**	**4,680.0**	**4,360.2**
	Մասնագիտական ծառայություններ	424110	4,800.0	4,680.0	4,360.2
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		**425100**	**900.0**	**990.0**	**984.5**
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110	900.0	990.0	984.5
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		**425200**	**610.0**	**727.5**	**600.2**
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210	350.0	350.0	319.0
	Գրասենյակային սարքեր և սարքավոր. ընթացիկ նորոգում և պահպ.	425220	110.0	97.5	64.0
	Այլ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպ.	425290	150.0	280.0	217.2
Գրասենյակային նյութեր և հագուստ		**426100**	**8,050.0**	**7,962.5**	**7,931.5**
	Գրասենյակային պիտույքներ	426110	350.0	262.5	231.5
	Հագուստ և համազգեստ	426120	7,700.0	7,700.0	7,700.0
Տրանսպորտային նյութեր		**426400**	**1518.0**	**1518.0**	**1488.0**
	Վառելիքի ծախսեր	426410	1488.0	1488.0	1488.0
	Այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար	426490	30.0	30.0	-
Առողջապահական և լաբորատոր նյութեր		**426600**	**3,000.0**	**3,000.0**	**2,750.4**
	Բժշկական քննությունների նյութեր	426610	3,000.0	3,000.0	2,750.4

Սույն հաշվետվությունը պետք է ընթերցվի այս հաշվետվության բաղկացուցիչ մաս կազմող 11-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություն (շարունակություն)

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար					հազար դրամ
Ծախսային հոդվածներ **Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը**		**Ծածկագիրը**	**Հաստատված**	**Ճշտված**	**Տարեսկզբից աճողական**
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	**Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը**		**Նախահաշվի գումարը**	**Նախահաշվի գումարը**	**Նախատեսված գումարը**
Կենցաղային և հանրային սննդի նյութեր		**426700**	**8,829.4**	**8,829.4**	**8,782.4**
	Կենցաղային նյութեր (Մաքրիչ և հիգենիկ նյութեր)	426710	7,091.4	6,641.4	6,630.8
	Հանրային սննդի նյութեր (Ծխախոտ)	426720	1,388.0	1,788.0	1,777.4
	Կենցաղային այլ նյութեր (Տնտեսական նյութեր ապրանքներ)	426730	350.0	400.0	374.2
Պարտադիր վճարներ		**482300**	**360.0**	**360.0**	**325.5**
	Այլ պարտադիր վճարներ	482350	360.0	360.0	325.5
Այլ ծախսեր		**486100**	**350.0**	**350.0**	**270.0**
	Այլ ծախսեր	486110	350.0	350.0	270.0
	2024թ. փաստացի ֆինանսավորում				**277605.3**
	ՀՀ պետական բյուջե վերադարձման գումարը				**1839.0**

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը հաստատվել է 2025թ. մայիսի 5-ին:

Արամ Ստեփանյան
Գլխավոր քարտուղարի տեղակալ

Արմինե Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Սույն հաշվետվությունը պետք է ընթերցվի այս հաշվետվության բաղկացուցիչ մաս կազմող 11-ից մինչև 12-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ

Փաստացի կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությանը կից ծանոթագրություններ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ «Կազմակերպություն») իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Կազմակերպությունը 1993թ.-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով ճանաչվեց որպես կամավորության սկզբունքով գործող, Կարմիր խաչի ազգային միակ, անկախ և ինքնավար ընկերություն, որը համագործակցում է հանրապետության իշխանությունների հետ մարդասիրական հարցերում և որն իրականացնում է իր գործունեությունը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի շարժման հիմնարար սկզբունքներին համապատասխան: Կազմակերպությունը Պետական ռեգիստրի կողմից գրանցվել է 2003թ. հուլիսի 31-ին:

Կազմակերպության գործունեության հիմնական ռազմավարական ուղղություններն են.

- Աղետների կառավարում
- Բնակչության տեղաշարժ
- Առաջին օգնություն
- Որոնում ծառայություն
- Սոցիալ-առողջապահություն
- Երիտասարդների հիմնախնդիրներին արձագանք
- Մարդասիրական արժեքների տարածում:

Կազմակերպությունը 2020թ. մայիսի 1-ից իրականացրել է «Տարեցների և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագիրը (այսուհետ՝ «Ծրագիր») Գյումրու շուրջօրյա խնամքի հաստատությունում, որը ֆինանսավորում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի N 1919-Ն որոշումը (ՀՀ Կառավարության 2020թ. ապրիլի 23-ի N 628-Ն որոշման խմբագրությամբ) և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Կազմակերպության միջև 2019թ. դեկտեմբերի 18-ին կնքված հուշագիրը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացման մասին 2024թ. ապրիլի 10-ին կնքված N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-3 պայմանագիրը, Կազմակերպությունն իրականացնում է Ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝ շուրջօրյա խնամքի կենտրոնում կազմակերպվում է շահառուների՝ սննդի տրամադրումը, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրումը, իրավական խորհրդատվության տրամադրումը, աջակցող միջոցներով ապահովումը, բժշկասոցիալական փորձաքննությունը կամ անձի ֆունկցիոնալության գնահատումը, հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություն ուղեգրելը, ազատ ժամանցը, աշխատանքային թերապիան: Շուրջօրյա խնամքի կենտրոնը շահառուներին տրամադրում է՝ անհրաժեշտ կահույք հագուստ,

սպիտակեղեն, կոշկեղեն՝ տարիքասեռային առանձնահատկություններին և եղանակային պայմաններին համապատասխան, անկողնային պարագաներ, անձնական հիգիենայի պարագաներ: Միջոցառումն ունի երկու բաղադրիչ, տվյալ պարագայում՝ որպես ընդհանուր տիպի խնամք՝ շահառու կարող են հանդիսանալ խնամքի կարիք ունեցող, տարեց և (կամ) հաշմանդամություն (այդ թվում՝ համապատասխան դեղորայք չգործածող, վարքային խանգարում չունեցող, անգործունակ չճանաչված թեթև կամ չափավոր աստիճանի մտավոր խնդիրներ) ունեցող անձինք:

Սույն միջոցառման համար դրամաշնորհը տրամադրվում է Կազմակերպությանը՝ Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից ուղեգրված շահառուներին շուրջօրյա ընդհանուր տիպի խնամքի ծառայություններ տրամադրելու նպատակով: Կազմակերպությունն իրականացնում է 160 շահառուի (այդ թվում՝ անկողնային խնամքի ենթակա մինչև 25 շահառուի) շուրջօրյա ընդհանուր տիպի խնամքի ծառայության տրամադրում՝ 105 հաստիքային միավորի միջոցով:

Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 286,276.4 հազար դրամ: Պայմանագիրը գործում է 2024թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

Ծրագրի իրականացման մեջ ներգրավված Կազմակերպության աշխատակիցների միջին քանակը 2024թ. ընթացքում կազմել է 113 մարդ:

Կազմակերպության գրանցված և գործունեության հասցեն է ՀՀ ք. Երևան, 0015, Պարոնյան 21/1 շենք:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.1 Պատրաստման հիմքերը

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը պատրաստվել են հաշվապահական հաշվառման հաշվեգրման հիմունքի համաձայն: Հաշվապահական հաշվառման այս հիմունքի շրջանակներում ֆինանսավորումը ճանաչվում է ստացման պահին, իսկ ծախսերը՝ ծառայությունների մատուցման կամ աշխատանքների կատարման պահին՝ հավաստող փաստաթղթի հիման վրա՝ անկախ վճարումից: Սույն Ծրագրի ֆինանսական հաշվետվությունը ներկայացվել է 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար:

2.2 Գործառնական և ներկայացման արժույթ

Կազմակերպության համար գործառնական արժույթը հայկական դրամն է: Սույն հաշվետվությունը ներկայացված է ՀՀ դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է սույն հաշվետվությունը օգտագործողների համար:

2.3 Ստացված ֆինանսավորում

2024թ. ապրիլի 10-ին կնքված N ԴՏՊ – Ծ1032.Մ11001/24-3 դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում «Տարեցերին և հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացման համար հաշվետու ժամանակաշրջանում Կազմակերպությունը ստացել է 277,605.3 հազար դրամ ֆինանսավորում:

2.4 Դրամական միջոցների մնացորդ

Հաշվետու ամսաթվի դրությամբ դրամաշնորհային պայմանագրի շրջանակներում չծախսված և պետությանը հետ վերադարձի ենթակա գումարի մնացորդը կազմել է 1,839.0 հազար դրամ, որը վերադարձվել է պատվիրատուի հաշվեհամարին 2025թ. հունվարի 22-ին:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 01.08.2025 10:51